ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անուն Ազգանուն**

   Անահիտ Ավանեսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ առողջապահության նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև, 2022թ. հունիսի 21-23

4. **Հրավիրող կողմը**

   Պատվաստանյութերի և իմունիզացիայի գլոբալ դաշինք (GAVI)

5. **Գործուղման նպատակը**

   Մասնակցություն Պատվաստանյութերի և իմունիզացիայի գլոբալ դաշինքի (GAVI) խորհրդի նիստին

6. **Քննարկված թեմաները**

   Նիստի ընթացքում քննարկվել են իմունականխարգելման ծրագրերի իրականացման խնդիրները, ամփոփվել են մինչ օրս իրականացված աշխատանքները, ընդունվել են առաջիկա ծրագրերի ֆինանսավորմանը և կառավարմանը վերաբերող ռազմավարական որոշումներ:

   Միաժամանակ քննարկվել են նաև համաշխարհային առաջնահերթություն հանդիսացող նոր մարտահրավերները, որոնք ծառացել են բնակչության առջև COVID-19 համավարակից հետո: Հաշվի առնելով մի շարք երկրների ծանր տնտեսական վիճակը՝ քննարկվել են միջին եկամուտ ունեցող երկրներին աջակցություն տրամադրելու հնարավոր մեխանիզմները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Նիստի ընթացքում անդրադարձել եմ COVID-19 համավարակի համատեքստում COVAX հարթակի գործունեությանը՝ որպես GAVI գլոբալ դաշինքի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության համատեղ նախաձեռնություն:

Մասնավորապես՝ բարձրացրել եմ անդամ-պետություններին, այդ թվում՝ Հայաստանին COVAX հարթակի միջոցով COVID-19 համավարակի դեմ պատվաստանյութերով ապահովելու ուշացումները և այլ խնդիրներ՝ ընդգծելով դեղագործական ընկերությունների հետ երկրների համար ավելի լավ պայմաններ բանակցելու կարևորությունը:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Նիստերի արդյունքում կայացվեցին մի շարք որոշումներ՝ ուղղված դաշինքի ղեկավար կազմի համալրմանը: Հաստատվեց դաշինքի ռազմավարական ֆինանսավորման ծրագիրը, ինչպես նաև ընդունվեցին որոշումներ, համաձայն որոնց՝ կվերանայվեն ծանր տնտեսական վիճակում հայտնված երկրների ֆինանսավորման մեխանիզմները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

28 հունիսի, 2022 թ.